ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով՝ բանակցային ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության Շնագիտական բաժնի (կենտրոն) շների պահպանման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 09.03.2017թ. N 23/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.03.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մխիթարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Եգանյանը, Գ.Ղազարյանը, Ն.Գալուստյանը, Ս.Մարապանյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և ուսումնասիրության մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Մխիթարյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»ը (Երևան, Ամիրյան-10/20)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտ:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված է ոչ թե Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»-ի կողմից, այլ Վրեժ Ղազարյանի կողմից և բացակայում է Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»ի կողմից տրված լիազորագիրը, Հավելված-3.1-ում նշված է որ Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»-ը հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է 4 000 000, 3 250 000 և 2 750 000 ՀՀ դրամի ''Շների պահպանման կամ վարժեցման ծառայություններ''-ի մատուցում, որի ընդհանուր արժեքը կազմում է 11 000 000 ՀՀ դրամ, սակայն այդ գումարների հանրագումարը կազմում է 10 000 000 ՀՀ դրամ:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ծառայության անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	Նախահաշվային գինը ՀՀ դրամ
		Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»		
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության Շնագիտական բաժնի (կենտրոն) շների պահպանման ծառայություններ	14 800 000	14 800 000	13 000 000

* Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»-ը ԱԱՀ վճարող չէ:

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշման 45-րդ կետի՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Հաջորդ նիստը հրավիրել 2017թ. մարտի 23-ին, ժամը 10:00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մխիթարյան

Անդամներ՝ Ա.Եգանյան

Գ.Ղազարյան

Ն.Գալուստյան

Ս.Մարապանյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան